

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԼՈՒԹՅՈՒՆ

Ս. Լ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գրիգոր Նարեկացին իր «Մատյանի» էջերից մեկում, ի լուր ու ի գիտություն ամենքի, հայտարարում է.

Սոյն գիր իմովս ձայնիւ, իբր զիս, ընդ իմ աղաղակեացէ,
Տարածեացէ զծածկեալսն, հոչակեացէ զգաղտնիսն,
Կականեացէ զկատարածն, հնչեացէ զմոռացեալսն,
Յայտնեացէ զաներեւոյթսն, բարբառեացէ զբարորսն,
Քարոզեացէ զխորոցն, պատմեացէ զմեղացն,
Մերկացուցէ զանտեսիցն, ցուցցէ զկերպարանս թաքուցելոցն:
Շաշափեացիս սովաւ որսքն, գտցիս գայթակղութիւնքն,
Յանդիմանեացիս անճառքն, քամեացիս չարեացն մնացուածք...

(Բան ԶԸ, Գ)¹

Եվ թվում է, թե նա իր «հոգու խորհրդարանում» (արտահայտությունը իրենն է) խմորված ու հունցված ամեն ինչը «Մատյանում» ասում է: Բայց «Մատյանի» հետ նույնիսկ մակերեսային ծանոթությունը ցույց է տալիս, որ բնավ այդպես չէ. «Մատյանը» այնքան էլ բաց գիրք չէ, ինչպես հեղինակը այդ մասին իր ընթերցողին քանիցս ասում է: «Ասելու» բովանդակ իմաստով (ներառյալ նաև ասելու ամենախորհրդավոր ձևը՝ լուրջությունը, ասելու կենսակից հակոտնյան) Նարեկացին, հիրավի, ամեն ինչ ասում է, ավելին՝ նորանոր ասելիքներ է հարուցում: Բայց ամեն ինչ ասում է՝ «ամենածածուկը» նույնիսկ «տեսանող» Աստծուն՝ իր երկի գլխավոր հասցեատիրոջը միայն: Նրան, միայն նրան է Նարեկացին ասում, թե «...զլոյզք մտաց խորհրդոցս գաղտնեաց, // Իբր զգլխաւորեալ յանգաւորութիւն չարութեան գործոց, // Խոստովանեալ՝ քեզ տարածեցից, աստուած իմ եւ տէր» (Բան Թ, Գ): Նա է «Մատյանում» միայն կատարյալ արժան համարվում լսելու. «Եվ արդ, ջուր կամաց եւ կաթ արտասուաց // Բեկութեամբ հոգույս, մտացս լքմամբ, // Խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի...» (Բան ԶԸ, Ա): Դեպի բացարձակը ձգտել-հասնել կամեցողը «Մատյանի» հենց սկզբում խոստովանում է՝

Ձա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի
Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց,
Եւ մատուցեալ եղեալ ի հուր թախծութեան անձին տոչորման
Զպտուղ ըղձից ճեմներոյ սասանեալ մտացս՝
Բուրվառաւ կամացս առաքել առ քեզ:
Այլ հոտոտեցի՛ս, հայեցի՛ս, գթած,
Քան ի պատարագն բոլորապտուղ,
Մատուցեալ ծխոյն բարդութեան:
Ընկա՛լ զսակաւամասնեայ յաղուածս բանից՝
Քեզ ի հաճութիւն և մի՛ ի բարկութիւն:
Ելցէ՛ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝
Վաղվաղակի ժամանել առ քեզ՝
Կամաւորական նուէր բանական գոհիս,

¹ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությանը Պ. Մ. Նաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985: Այսուհետ այս գրքից մեջբերումների հղումները կտրվեն շարադրամբում:

**Ողջակիզեալ զարութեամբ ճարպոյ,
Որ յիսն է պարարտութիւն (Բան Ա, Ա):**

Մեծ տառապողն իր անասելի տառապանքների «Մատյանը», իր՝ բանավոր զոհի
նկերն այդ սրտանց, իր մեղքերի պարարտ ճարպի զորութեամբ ողջակիզելով, բոլորան-
վեր Աստծուն է ընծայում և ո՛չ այլ ոքի:

Բայց, ինչ խոսք, ամենատես Նարեկացին իր և Աստծու միջև (կամ իր կողքին, որպէս
«բարեկամ») տեսնում է նաև երրորդ կողմին՝ ընթերցողին, որին նաև («իր» պես) բուժելն ու
նորոգելն է համարում իր «Մատյանը» գրելու նախապատճառը: Ահա այդ ընթերցողի հա-
մար է, որ Նարեկացին «Մատյանում» իրեն ինչ-որ տեղ գաղտնածածուկ, լուսկյաց է պա-
հում, բարուրվում է. նրա առջև է, որ բանական զոհը ամբողջովին չի ողջակիզվում, իր խո-
հերի խորհրդակիր սենյակի խորքից լիովին դուրս չի գալիս ու անհապաղ նրա քիմքին
հասնում: Եվ հատկապես իր այն ընթերցողի, որն իր հոգին երկրային պատկերներով է ո-
ղողում, ու որը, հետևաբար, իրենից անվայելուչ քայլ է պահանջում՝ զոհաբերել՝ իր զոհա-
բերությունը, Աստծուն ընծայված նվերը հետ առնել՝ իրեն նվիրել: Իր այդ «ընթերցողի»
առջև, քանի դեռ նա Աստծուն ու իրեն չի հարազատացել, Նարեկացին իր հոգու խորհրդա-
րանի դուռ-լուսամուտները կարելովույն փակ է պահում: Նիցշեն կարծես իսկը նաև Նարե-
կացու վերաբերյալ է ասել, թե «Այն սրտերը, որոնք ազնվականական հյուրընկալության
են ընդունակ, ճանաչվում են բազմաթիվ վարագույրները քաշած պատուհաններով և փակ
փեղկերով. իրենց լավագույն սրահները նրանք դատարկ են պահում: Բայց ինչո՞ւ: Որով-
հետև նրանք սպասում են հյուրերի, որոնց հանդէպ «անխստապահանջ» չես լինում...»²:

Իր «Մատյանի» արժեքն իմացողն այլ մտտեցում է ցուցաբերում սպասվելիք ընթեր-
ցող-հյուրերի, Աստծուն սիրող ընտրյալների, բարեպաշտների, իր ողբերգությունը սիրով
ճաշակող սրտերի, իր կենաց գրքին հաղորդակիցների (տե՛ս Բան Գ, Գ) վերաբերյալ. թեև
նա վերջիններիս առջև նույնպես փակում է իր հոգու խորհրդարանի դուռ-լուսամուտները,
բայց և այնպես նրանց հետ լռելյայն խոսում է՝ անընդհատ հուշելով «Մատյանում» այն
խորհրդավոր բանալու գոյության մասին, որով հնարավոր է մտնել իր հոգու խորհրդա-
րան (թեև ոչ լրիվ ու ամբողջովին), որին ապավինելով նրանք ի զորու են թարգմանը լի-
նելու (թեև ոչ կատարելապես) իր՝ խորը թմրություն լուռության, որն ինքը՝ Նարեկացին,
բնութագրում է որպէս աչքերի անթարթ բացություն (տե՛ս Բան ԶԵ, Ա): Նարեկացու
«Մատյանում» և մյուս երկերում տարբեր միջոցներով՝ խորհրդապատկեր (սիմվոլ), միս-
տիկա, այլաբանություն, փոխաբերություն, առակ, առասպել և այլն, արտահայտված խո-
սում լուռության լեզվի գոյության փաստը նկատել են գրեթե բոլոր նարեկացիագետներն ու
«Մատյանով» հետաքրքրվողները³: Սույն հոդվածում մենք կփորձենք այդ փաստը դարձնել

² Ֆրիդրիխ Նիցշե, Բարուց և չարից անդին, Եր., 1992, էջ 232:

³ Այսպես օրինակ՝ Մ. Աբեղյանը Նարեկացու երկերում տեսնում է «վսեմ խորհրդավորու-
թյուն» (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 583), դրանցում «մարդկային հոգին և բնությունը
մտնում են քնարերգության մեջ..., թեպետ և այլաբանությամբ» (նույն տեղը, հ. է, Եր., 1971, էջ 326).
Լ. Շանթը Նարեկացի երևույթը գնահատում է որպէս «վերադարձ... դեպի հին հեթանոսական հո-
գեքանությունը» (Լ. Շանթ, Երկեր, հ. IX, Պեյրուք, 1946, էջ 118), որը, մեր կողմից ավելացնենք, Նա-
րեկացու ժամանակներում տիրապետող կրոնական հոգեբանության պայմաններում չէր կարող
տեղի ունենալ առանց լուռության լեզվի գործադրման. Արշալ Զոպանյանը Նարեկացու «հոգենուագ
մատենանք» որակում է որպէս «ամբողջ միստիկականություն», որպէս մի գործ, որում «ամենն քիչ»
է «աստվածաբանականը... իր ամբողջ գործին մէջ» (Արշալ Զոպանյան, Դեմքեր, Փարիզ, 1924, էջ
3). Պ. Սևակի նրբամիտ հայացքը նկատել է, որ Նարեկացին գրել է «ակնարկով և կիսախոսք» (Պա-
րույր Սևակ, Երկեր, երեք հատորով, հ. 3, Եր., 1983, էջ 577). Վաչէ Նալբանդյանը «Մատյանի» մեջ
տեսնում է նաև «ներքին իմաստ», որը հեղինակը լռելյայն է անցկացրել (տե՛ս Վաչէ Նալբանդյան,
Գրիգոր Նարեկացի, Եր., 1990, էջ 174). Մ. Մկրյանը նկատում է, որ «Մատյանի» վրա «կրոնական
ըող» է քաշված, և այն պետք է «վերցնել», որ տեսնենք «էությունը» (տե՛ս Մ. Մկրյան, Գրիգոր Նա-
րեկացու «Մատյան ողբերգության» պոեմը՝ Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, գրա-
բարից թարգմանեց Մկրտիչ Ներսիսյան գրքում, Եր., 1962, էջ XIX). ֆրանսիացի գրող Գաբրիել
Մուրեն գտնում է, որ Նարեկացին «ուճի... տաղեր..., որոնց մեջ կարծես սահելով անցնում է
հանգած հեթանոսության արձագանքը և միստիցիզմի հեշտասարսուռ շունչը» (մեջբերումն ըստ՝

ավելի որոշակի,- այդպես հուսալով հետազոտողների ուշադրությունը էլ ավելի կենտրոնացնել նրա երկերի այդ կարևոր կողմի վրա, առանց որի Նարեկացուն հասկանալ անհնար կլինի:

Հասկանալ Նարեկացու մեծ լուրջությունը, ինչ խոսք, փափագ է: Քանզի ընդհանրապես հասկանալ Նարեկացուն նշանակում է, ըստ Պ. Սևակի, ակամա հոգեկցվել-շընչակցվել նրան, բայց, այդպես վարվելով, շուտով թոքերիդ մտեղեն ցավով զգում ես, որ դա անկարելի է, ու շնչակտուր ես լինում: Բայց և այնպես՝ փորձենք...

Ամեն մի հասկացում որոշակի հերմենևտիկ էլակետ է ենթադրում: Ո՞րն է մեր ելակետը: Նարեկացուն արտաքննապես, արտաքին զգայարաններով ու այդ հիման վրա ձևավորված մտային պահեստարանով հասկացումը բավական չէ. հարկ է նրան նաև ներքնապես ըմբռնել-հասկանալ⁵, ներքնապես, ինչպես մեր՝ ըմբռնել-հասկանալ ցանկացող-ներին ներաշխարհից, որպես ըմբռնման-հասկացման ամենավստահելի պատվարից դիտելու, այնպես էլ «Մատյանի» «ներսը» թափանցելու, նրա հեղինակի «շունչը» զգալու իմաստով: «Մատենան շնչական, բարդեալ ի յինքեան // Ներքոյ եւ արտաքոյ որբս եւ վայս եւ ձայնս», - ասել է Նարեկացին իր վերաբերյալ (Բան ԼԹ, Բ): Իսկ շնչավոր Մատյանին ըմբռնել-հասկանալու համար հարկ է նրա շնչից գեթ մի կտոր ունենալ և ապա, ունենալուց ետքը, փորձել շնչակցվել նրան:

Բայց սա էլ բավական չէ Նարեկացուն հասկանալու համար: Վ. Վինդելբանդը գերմանական ոգու արտահայտություններից մեկի՝ Ի. Կանտի վերաբերյալ ասել է. «Հասկանալ Կանտին, նշանակում է դուրս գալ նրա սահմաններից»⁶: Մենք էլ, նմանապես, հայ ոգու խտացում-արտահայտություն Նարեկացու վերաբերյալ կասենք. հասկանալ նրան՝ նշանակում է «դուրս գալ» նրա՝ մեզ թողած ժառանգության սահմաններից, բայց «դուրս գալ»՝ վերոնշյալ պահանջը կատարելուն զուգընթաց: Իսկ այդ «դուրս գալ»-ը հետազոտողին պետք է հուշի՝ թափանցել ամենայնով ապրողի ապրած ներկա, անցյալ ու ապագան (զի նա, իր խոսքերով ասած, ապառնի փորձն էլ է վաղորոք «առել») «կյանքերի» (դա՛ ինչպես անձնական, այնպես էլ անանձնական, ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային, ինչպես աշխարհիկ, այնպես էլ ոչ աշխարհիկ իմաստներով) ոլորտը, ըստ կարելիվույն փորձել ըմբռնել-հասկանալ նրանց իմաստը և ապա դրանք բերել-կիզակետել «Մատյանի» շնչի ակունքներում ու ծավալումներում, այսինքն՝ դարձյալ վերադառնալ «Մատյան», բայց վերադառնալ այս անգամ ավելի հարստացած: Այս կտրվածքով, օրինակ, Պ. Սևակը, մոտենալով Նարեկացուն, ի դեմս նրա տեսնում է 10-րդ՝ «հակամիտությանց» դարի հայ իրականության հոգևոր առողջ միտումների «մի հոյակապ ու վիթխարի խաչքար» արձանացում. «Դա... դարն էր մեծագույն խռովքների,- գրում է նա, - Մի կողմից՝ կրոնական մոլեռանդության անհախադեպ եղք ու մարմաջ. վանք - մենաստան - անապատ - ճգնաձավների համատարածություն, մարմինն սպանելու մոլուցք. անեծքի շաչ և բանադրանքի շառաչ: Մյուս կողմից՝ ահեղ հավատախախտություն ու ծիսամարտություն՝ ի դեմս թոնդրակեցիների, մարմնի իրավունքի բարձրագույն պահանջ..., աշխարհիկ մտածողության ծլարձակում՝ այն բույսերի ու թփերի նման, որոնց մազարմատները վերջ ի վերջո՝ ճեղքում են գմբեթներ ու փլատակում հաստահեղույս որմեր... Դա դարն էր, Նարեկացու իր իսկ բառով ասած, հակամիտությանց... Իսկ ծայրահեղությունները, ինչպես գիտենք, միանում

Վաչե Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 66). «Մատյանում» կան վերծանության կարոտ բազմաթիվ ծածկագրություններ ու այլաբանություններ», - գրում է Հ. Միրզոյանը (Հ. Միրզոյան, Նարեկի ծածկագրությունների վերծանության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, № 3, էջ 67), և այլն (ընդգծումներն իմն են,- Ս. Մ.):

⁵ Տե՛ս Պարույր Սևակ, Երկեր, հ. 3, էջ 66:

⁶ Ինքը՝ Նարեկացին, ճանաչողության այդ ձևը, որը ժամանակակից իմաստասիրության մեջ ստացել է «ինտուիտիվ ճանաչողություն» անվանումը, որակում է որպես ներշնչումով ճանաչողություն կամ ներքնատեսությամբ տեսանում, կամ խղճմտանքի ձայն, կամ ներքին աչք, որն է, ըստ նրա, հնարավորության ընձեռում՝ ամեն մի քողածածկույթ՝ բացելու, երևույթների իսկության մեջ թափանցելու:

⁶ В. Виндельбанд, Прелюдии, СПб., 1904, с. VI:

եմ: Եվ հենց այդ միացման կետում էլ իբրև սահմանակցման ու սահմանաքաժանման մի հոյակապ ու վիթխարի խաչքար, հողից բուսնում ու երկինք է միտում Գրիգոր Նարեկացու ահարկու և աստվածատեսական կերպարանքը⁷: Հիրավի՝ «Մատյանից» դուրս գտնվող աշխարհի մի բեկորի՝ 10-րդ դարի հայ իրականության հոգևոր ուժագծերի ու դրանց՝ «Մատյանում» դրոշմվելու դիպուկ բնութագրություն: Բայց ավելացնենք նաև, որ դարաշրջանի հակամիտությունների՝ «Մատյանում» ի մի գալը չէր կարող նրանում համապատասխան հրայրքային «կարճ միացումներ», դրական ու բացասական կենսալիքքերի բախում-առճակատում առաջ չբերել, որն, ինչ խոսք, իր խորը կնիքն էր թողնելու «աստվածատեսիլ» գրքի ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության, իսկ մեր խնդրի առումով՝ հեղինակի հաճախ արտահայտվող լռության պահվածքի վրա:

Ինչ խոսք, «դուրս գալով» Նարեկացուց՝ թերի կլինի միայն ազգային հարթության վրա մնալը. հարկ է մեկ այլ՝ մարդկային մասշտաբ-տիրույթ էլ հաշվի առնել: Ընդհանրապես, Նարեկացու երկերին հատուկ է անձնականությունը. ամեն ինչ նա անցկացնում է իր «ես»-ի ջուրայով («Մատյանում» նա իր «ես»-ի անունից էլ հիմնականում հանդես է գալիս), դեպի «արտաքին» աշխարհ նրա մեկնակետը իր հոգու խորհրդարանն է, որտեղ և նա ամեն ինչ հալում-ձուլում է: Բայց այդ անձնականությունը բարձրագույն իմաստով «անձնիշխանական» (արտահայտությունը Նարեկացունն է) անձնականություն է, անձնականություն, որի՝ որպես համայնի կիզակետի մեջ ի մի են գալիս երկրային ու երկնային կյանքի բոլոր ձևերը և ապա, նոր կյանք ստանալով, դրանք բեկվում-սփռվում են՝ «ի դուրս»: Փաստորեն հայ հանճարն իր երկերով ընթերցողին է հանձնում իր մանրակրկիտ ինքնազննում-ինքնապեղումի արդյունքները: Իսկ ընթերցողը, դրանց խորհուրդը մեկնել-բացահայտել կարողանալու դեպքում, դրանց միջոցով եզակի հնարավորություն է ստանում հաղորդակցվելու համայնի, ներկա դեպքում, համայնի մաս կազմող մարդու աշխարհի, նրա պատմության, մշակույթի հետ: Այս վերջին իմաստով Նարեկացու երկերը (հատկապես «Մատյանը»), փաստորեն, նաև մարդու՝ որպես ամբողջի մասին երկեր են: «Նա (Նարեկացին, - Ս. Մ.) մեկն է աշխարհին այն սակավաթիվներից, որոնց մականունն է Մարդախույզ: Նա մեր առաջին մարդագիրն է»⁸, դիպուկորեն նկատում է Պ. Սևակը: Ամենատեսի երկերից «դուրս եկող» հետազոտողը նրա երկերի այդ կողմը անպայման պետք է տեսնի, եթե ցանկանում է դրանց ամբողջական իմաստը վեր հանել:

Այսպիսով, աներկբա է հետևյալը. Նարեկացին, հայտնվելով երկու հակադիր մշակույթների ու ոգետիպերի՝ հայ-հեթանոսական ազգային ու միջնադարյան կրոնական «վերազգային» բախումների կիզակետում, ինքն իրենով մարմնավորելով մարդու երկու՝ «իր» և ընդհանրապես մարդու տեսակների պայքարի դրաման և, հոգևոր պաշտոնի բերումով ինքը լինելով վերջինիս արտահայտիչը, չէր կարող այդ վերջինի մեջ առաջինը դրվագել անթաքույց ձևով ու... չլռել: Ահա և Նարեկացուն «դոսից» դիտելու մեթոդաբանական այս «պնդողակն» ունենալով մեր տրամադրության տակ՝ փորձենք «վերադառնալ» իրեն՝ Նարեկացուն, փորձենք «Մատյանի» օգնությամբ պարզել, թե ինչու նա լռեց (լռություն, որը, իր իսկ վկայությամբ, այլ բան չէ, քան «Մեծածայն հնչում երկարագոչ»), ու իր այդ լռությամբ ինչ ցանկացավ ասել:

Մեծ զգուշավորի ներքին ձայնը նրան հուշում էր, որ ներքին ու արտաքին «հակամիտությանց» գոյության պարագայում իր ոգու խորհրդարանում ձևավորված «Մատյանի» նախատիպերը նույնությամբ լույս աշխարհ բերելու դեպքում հաստատ այն իր ժամանակակից պահպանողական ուժերի կողմից հրո ճարակ էր դառնալու: «Մատյանը» ապագայի գիրք էր լինելու, ինչպես ինքը՝ հեղինակը, դրանում խորապես համոզված էր, ինչպես և ժամանակը դա ցույց տվեց: Մնում էր այն փրկել, մնում էր ըստ անհրաժեշտության խորհրդավոր «շնչավոր» լռության լեզուն ընտրել, և դա (իրեն հոգեկից ընթերցողի համար արդեն) զուգակշռել զանազան ու զարմանազան փոխաբերություններով, այլաբանություններով, խորհրդապատկերներով, երկիմաստություններով, կեսխոսք-կեսակնարկներով, հայոց լեզվի տարաբնույթ նշաններով:

⁷ Պարույր Սևակ, Եզվ. աշխ., էջ 62-63:

⁸ Նոյն տեղում, էջ 66-67:

Այս առումով հիշենք Նարեկացու վարքաբանությունից հայտնի այն փաստը, ըստ որի նրան եկեղեցին բանադրել է, և որի վտանգը ինքը զգացել է այն գրելու ողջ ընթացքում, և որի մասին նա իր ընթերցողին երբեմն ակնարկում է: Սակայն, նշենք նաև, որ Նարեկացուն իր անձի բանադրանքը չէ, որ անհանգստացնում էր, այլ «Մատյանի», զի նա հանդիմանում էր, որ ինքը՝ որպես մահկանացու, թեպետ պիտի վախճանվի, բայց իր «Մատյանով» միշտ անմեռ պիտի մնա (Բան ԶԸ, Բ) ու, մեր կողմից ավելացնենք, նաև պիտի ապրեցնի: Ուստի դժվար չէ կոսիել, որ հայ հանճարն իր երկում խորախորհուրդ հնարանքների պիտի դիմեր մեծ վտանգի դեմն առնելու համար: Հատկանշական է այս իմաստով «Մատյանի» Բաներից մեկում առ Աստված հնչեցված հետևյալ ինքնախոստովանություն-անհանգրստությունը.

Իսկ արդ, վասն զի արթնականն մեր զուարթութիւն
Քեզ ննջումն իմն է համարեալ,
Իսկ ի խոր թմբրութիւն լռելն
Վասն ուղիղ հաւատոյն ի քեզ՝
Անթարթափ քացութիւն աչաց,
Ուղղեա՛ հոգւոյդ քոյ իմաստութեամբ
Ջյաշողուած ձեռիճս գործոյ՝
Ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց,
Ջարացո՛, տէր, ի հանդէս բարի
Եզնաւորական արի վաստակոյ,
Կցո՛րդ լեր կարեացս տկարութեան:
Թեթե՛ս կացո զաշխատութեանս այս սկիզբն,
Արագեա՛, միշտ կարող, զյառաջադրեալ ձեռակերտս,
Դիւրաւո՛րս ընթացո ի յաւարտումն լրմանն,
Ի վախճա՛ն իրին բերկրութեան զիս հատ,
Ժամա՛ն կացուցես ի հանդիպումն յուտոյն,
Կցո՛րդ լեր ուղոյն ճանապարհիս ընթացից,
Ի թո՛խս ամբարձման փութացուցե՛ս յաւգտակարն:
Ընդ աջմէ՛ ՚իմ յիցիս ի վտանգի ծանրութեանն,
Ջձայն քո լուո՛ ՚ի յանձկութեանն պահու,
Ջեռամբ քո կեցո՛ ի կորստեանն ժամու,
Մատամբ քո ազդե՛ս ի սահմանին անձկութեան,
Հարթեա՛ զխտրոց ամենաչար խափանմանն,
Հոգեղենին առաքմամբ՝ ըստ Ամբակումայ՝ ինձ հնարեա,
Բա՛ն ինձ շնորհեա ի յատենի բազմութեանն.
Իմաստութի՛ւն յիս տնկեա ի հանդիպման քնութեանն,
Ամպով կամաց քոց հովանացի՛ր հրաշապէս,
Հանդարտեցո՛ փայտիւղ կենաց զծովուս մրրիկ,
Սանձեա՛ զաստեաց կենցաղոյս պատկեր քոյին հրամանաւդ:
Քանզի թէ աստ ողորմութիւն քո, տէր, կամեսցի,
Այս լուծութիւն կոհակաց կարծր է, քան զվէմ...
(Բան ԶԵ, Ա, ընդգծումներն իմն են - Ս. Մ.)

Բերված հատվածից դժվար չէ զգալ, որ Նարեկացին իր «Մատյանը» գրելուն ձեռնամուխ լինելու հենց սկզբում ինչ-որ վտանգներ է կանխագուշակում: Եվ դրանցից սարսափած ու իր ոգու զավակի անհամբեր լույս աշխարհ գալուն սպասելով՝ դիմում է Աստծուն (իր գլխավոր ապավենին)՝ թեթևացնելու իր աշխատանքի սկիզբը, արագացնելու իր ձեռակերտի ամբողջական տեսքի բերումը, դյուրացնելու իր գործի ընթացքը դեպի հանգուցալուծում, այնպես անելու, որ ինքը ժամանակին հասնի իր նպատակին: Անշուշտ, «Մատյանի» ճակատագրի հետ կապված այս տագմապները նրան այն երկնելու ամբողջ ընթացքում հետամտել են՝ իրենց կնիքը թողնելով հեղինակի գրչի ընթացքի ու հետագծի վրա: Նարեկացու մեջ իր երկը արարելու զարմանաճրաշ դիրքորոշում է առաջանում, ո-

րը ոչ իր ասելիքին է վնասում և ոչ էլ «Մատյանին»։ Առ, աստվածային դրվածքով առաջ-նորդվելով, ըստ որի զվարթ արթնությունը, կենսագործումը մինչ-հանգիստ է համարվում, իսկ խորը հանգստի մեջ լուռությունը՝ ուղիղ հավատքի համար՝ աչքերի անընդհատառե-սություն, կենսագործումի անընդհատելի ընթացք, դիմում է Աստծուն, ըստ այդմ, իմաստ-նորեն ուղղելու իր ձեռնարկածը, այնպես որ՝ ո՛չ իր զվարթ արթնությունը ի կորուստ մատնվի և ո՛չ էլ լուռությունը համրանա, որ դրանք կենակցորեն լրացնեն, հարմարեցվեն միմյանց և ոչ վնասեն։ Այն, ինչը ընթերցողը «Մատյանում» լիովին տեսնում է։ Նարեկա-ցու զվարթ արթնությունը հանգիստ է, այն էլ՝ երազային հանգիստ, իսկ լուռությունը՝ ամե-նատես անթարթ աչքերի բացություն, ասել է թե՛ խորհրդավոր լուռություն։ Բերված հատ-վածի հաջորդ տողերում իր մեծ գործին ըստ ամենայնի մեր նախապատրաստվողը ավե-լի է կոնկրետացնում Աստծուն հղած իր հայցադիմումը. խնդրում է ուղեկից լինել իր անց-նելիք ճանապարհին, բարձր թոհիչքով իրեն դեպի իր նպատակը տանել, ամենածանր վտանգի ժամանակ աջ կողմը կանգնել, ձայն տալ անձկության պահին, նեղն ընկնելու դեպքում մատով ներգործել, ամենաչար խափանման արգելքները հարթել, անելանելի պահերին ճար անել, - խնդիրքներ, որոնց բավարարումը «Մատյանում» մենք դարձյալ տեսնում ենք։ Բայց մեր հեռատեսն իր «Մատյանի» լույս աշխարհ գալուն ու ապրելուն ապառնացող ամենաահավոր վտանգն է աչքի առաջ պատկերացնում՝ ատյանը, երկրա-կենցաղ դատավորների քննությունը։ Ահա թե ինչու այդ ահավոր վտանգի դեմն առնելու համար մեր խորաթափանցը դիմում է Աստծուն՝ խուր բազմության առաջ կանգնելիս հա-մապատասխան խոսք շնորհելու իրեն ատյանում, իմաստություն-խոհեմություն դնելու իր մեջ՝ քննության դեմ հանդիման կանգնելիս։ Բայց Նարեկացին իր ներսից էլ էր վտանգ տեսնում. նա անհանգստանում էր, որ մրրկածուսի իր հոգի-ծովը թե՛ «Մատյանը» գրելիս, և թե՛ ատյանին դեմ հանդիման, միգուցե, տեղի տալով երկրային կենցաղի պատկերնե-րին, ջղային ալիքվեր. ուստի դրա դեմն էլ առնելու համար նա դիմում է Աստծուն՝ իր կամ-քի ամպով (ծածկույթով) հովանի լինելու իրեն, կենաց փայտով հանդարտեցնելու իր մրրկածուսի հոգին, ամենագոր ձեռքով սանձելու երկրային կենցաղի պատկերները։ Մեծ հավատավորը համոզված է, որ եթե Աստված կամենա, անպա տարրալույծ կոհակներն իր հոգին կարծր կանեն ավելի. քան քարը, - համոզմունք, որը «Մատյանում», միգուցե նաև ա-տյանում, ըստ ամենայնի իրականացվել է։

Նարեկացուն ըմբռնել-հասկանալու, մեր խնդրի առումով՝ նրա ամենասաց լուռությու-նը վերծանելու համար հարկ է հաշվի առնել նրա հոգու խորհրդարանի գաղտնիքները ցուցանող վերոբերյալ ինքնախոստովանություն-տազնապները։ Դրանք մեծապես լույս են սփռում այն հարցի վրա, թե ինչու է մեծ խորագետը իր «Մատյանը» շարահյուսելիս ընտրել ասել-չասելու ոճը, ինչու ոգու թևերն ըստ ամենայնի բացող զվարթ արթնության («բարձր թոհիչք») արարողական կենաց դիրքորոշումն ընտրելուն կենակից՝ նա իրեն հա-րազատացրել է նաև խորհրդավոր լուռության, երբեմն նույնիսկ քար լուռության կեցվածքը։ Այնպես որ, Նարեկացուն ըմբռնելու համար՝ բացի նրանից, որ պետք է թափանցել նրա՝ ոգու բարձր թոհիչքով ասածների իմաստների մեջ, հարկ է հաշվի առնել նաև ժամանակա-տարածային պայմաններով թելադրված նրա չասածները, ավելի ստույգ՝ լուռությամբ աս-վածները։ Իսկ վերջիններս, հիմնականում, պետք է տեսնել մեծ ոգեղենի ասածների տո-ղատակերում և... վերամասերում, բայց «աննյութական» վերամասերում, կամ, իր իսկ բառով ասած, «շնչի» մեջ։ Այս առումով Նարեկացին ամենազանազան հնարանքների է դիմում բառի նյութեղենությունը պակասեցնելու, այն թեթևացնելու, նրա խորհրդավորու-թյունը ընդգծելու համար՝ ասելիքի երաժշտականություն, լեզվա-տրամաբանական տա-րաբնույթ՝ նշաններ, միտք-զգացմունքի զարմանահրաշ անցումներ, առակախոսություն, այլաբանություն, փոխաբերություն, խորհրդապաշտական պատկերներ և այլն։

Ընտրելով իր ասելիքը արտահայտելու, իր ոգու խորհրդարանում կուտակված լա-վաների ժայթքման այս տարականոն ոճը՝ Նարեկացին հավատում է իր «բարեկամ» ըն-թերցողին, որ նա, զգալով հանդերձ իր ասելիքի նյութեղեն ահագնությունը, անտես չի ա-նի նաև իր խորհրդավոր լուռությունը, որ վերջինիս թարգմանը կլինի նա։ Նա համոզված է, որ ընթերցողը իր հետ իր խոհերի խորհրդակիր սեմյակի խորքերում հայտնվելու և այնտե-ղից իր հետ կամ մեկուսի բարձրանալու դեպքում իր ասելիքում պարզ ու սեղմ խոսքերի

շարահրանք կտեսնի (Բան Ա, Ա): Նարեկացու ապավենը իրեն հարազատ, իրեն ըմբռնող ու հասկացող ընթերցողն է: Եվ նա իր «Մատյանի» ողջ ընթացքում իր այդ ընթերցողի հետ հարազատորեն զրուցում է՝ նրան անընդհատ հուշում, գլխի գցում, ըստ ամենայնի նախապատրաստում իր «Մատյանը» ճիշտ վերծանելու համար: Բայց նաև, հակառակը, վստահ նրա ըմբռնողականությանը, փոխադարձաբար նրանից լիցքավորվում է՝ էլ ավելի բացելով իր ոգու թևերը, էլ ավելի ծավալելով ու խորացնելով իր այլասացությունները: Բերենք մի քանի փաստ: «Մատյանի» էջերից մեկում նա իր ազնիվ ընթերցողին խոստովանում է, և դա «բարձրաձայն», որ իր «Մատյանում» պատկերված են ծածուկ խորհուրդներ, վարագուրված խորհուրդ-պատկերներ, և, հետևաբար, նա դրանք լավ հասկանալու համար իր կողմից միտք-զգացմունքի ջանք պետք է գործադրի դրանց վրա քաշված վարագույր-քողածածկույթները դեռ տանելու, դրանք վերծանելու՝ համար: Իր ընթերցողի նկատմամբ շատ հոգատար Նարեկացին դա անընդհատ, տարբեր ձևերով ասում է՝ մնացածը թողնելով նրա խղճի ձայնին... Այս կապակցությամբ «Մատյանում» անչափ կարևոր մի դրվագ կա, որը պարզորոշ ցուցանում է Նարեկացու պատկերացումը իր և իր «Մատյանը» վերծանողի կապի մասին, պատկերացում, որի «հերմենևտիկ էֆեկտը» այն աստիճան է, որ արժեք այն հերմենևտիկայի դասագրքերում ընդգրկել: Նա, դիմելով Աստծուն, իր «Մատյանը» «վերծանողների» հետ կապված, ասում է.

Արդ, բանի մաղթանաց վերծանողացն այսմ մատենի
Ողորմեա՛ վասն խաչի եւ չարչարանաց
Եւ մահու Որդւոյ քոյ, Հայրդ գթութեան,
Սկիզբն առաքողի ողբերգութեան ձայնի այսմ արտասրածին նուագի,
Որ գայս դեղ փրկութեան կենաց մեզ յարմարեցոյց,
Եղիցի՛ բժշկեալ յանուն քո, հգաւր:
Որ հետս ելից խոստովանութեան մեզ նկատեցոյց
Այսու պայմանաւ պատշաճականաւ,
Լիցի՛ անարատ յիրոցն պարտեաց:
Որ զհպարտութեանն թես հարթել մեզ վարդապետեաց
Ի սոյն կանոնի կենաց պատգամի,
Եղիցի՛ գերծեալ ի չար կապանաց մահու արկածից...
Ընդ որում եւ մեք գրեսցուք՝ երջանիկ գտեալ ընդ սմին (Բան ԻԸ, Զ):

Մեր հեռատեսն իր «Մատյանը» վերծանողների աղոթքների խոսքը լսելն է համարում իր նվազը երկնելու նախապատճառը, նա իրեն ըմբռնող ընթերցողի խորամտությամբ է պայմանավորում «Մատյանում» ընտրած խոստովանության «այսու պայմանաւ պատշաճականաւ» ձևը, նրա խորաթափանցությանն է ապավինում իր հպարտության թևերը կտրելու համար: Նարեկացին հավատում է իր ընթերցող-վերծանողին ու դեպի նրան է հառում իր հոգու խորհրդարանի աչքերը, նրա՝ «Մատյանով» դարձյալ նորոգվելու և լուսավորվելու հանգամանքով է պայմանավորում իր երջանկացումը: Մեր ապագայատեսնը իր ընթերցող-վերծանողների համար է հատկապես պարտքերից ազատ, չար կապանքներից զերծ մնալ տեսնել ցանկանում (տե՛ս նույն տեղում): Իսկ իր «Մատյանի» հետ կապված էլ նա հույս է փայփայում, որ այն ընտրյալների շրթունքներով բարբառելու ու հրեշտակների բերանով խոսելու է (տե՛ս Բան ԶԸ, Բ): Նարեկացին հավատացած է, որ ինքը ապագայի սերմնացան է:

«Մատյանի» մեկ այլ դրվագում Նարեկացին մեկ ուրիշ՝ գուտ մարդկային գործոնով է

* Ավելորդ չէ այս կապակցությամբ նշել, որ «վերծանել»-ը նույնիմաստ է՝ վերստին, կրկին ճանաչելուն («ծանել» - նշանակում է «ճանաչել»), այսինքն՝ հեղինակի կողմից ճանաչածը ընթերցողի կողմից վերստին ճանաչելուն՝ համապատասխան վերջինիս աշխարհընկալման, նրա արած ժամանակա-տարածային պայմանների ու հոգևոր հնարավորությունների: Այսինքն՝ հանձնի «վերծանել»-ուն՝ մենք գործ ունենք հեղինակային տեքստի որոշակի ռեկոնստրուկցիայի (վերակազմության) հետ,- այն, ինչը Նարեկացին, փաստորեն, բանիմաց ընթերցողին հորդորում է իր «Մատյանի» վերաբերյալ:

բացատրում իր թերասացությունը: Նա, Աշելով մեր՝ հոգիներ ապականող գլխավոր մեղքերն իրենց ենթակա ու ստորադաս բոլոր մասերով, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է բյուր հազարներից, միաժամանակ ավելացնում է, որ դրանց «...գիտմայնիցս թիւ նա միայն զարե իմանալ, // Որ զառ ի մէնջ չէութիւնն գրեալ // Իբր զէութիւն գործոց տեսանէ» (Բան Զ, Ե): Եվ ապա հորդորում է ընթերցողին իր այդ «թերասացությունը» հասկանալ, զի՝

- ...եթէ ոք զանձն ոչ խաբեցէ,
Եւ առ երեսս ոչ կերպարանեցի,
Եւ կեղծաւորաթար ոչ անհաւատեցէ,
Եւ մարդ զինքն ծանիցէ,
Եւ հասարակաց բնութեամբ վարեցի,
Եւ երկրածին զանձն դիտեցէ,
Եւ ի չափ իրում կանոնին կացցէ,
Իմասցի, ծանիցէ զնախաթի մասունս արկածիցդ վերագրելոց,
Թէ ոչ ընդունայն ինչ գրեցի
Եւ կամ զբնալ իսկութիւնն սահմանեցի,
Որ ի մերս բնութեան պտուտկի ազգի ազգի վրիպականութիւն,
Այլ ի բիրուցն արգասեաց չարեաց չափ մի երեսեցուցի,
Զի նոքաք եւ զայլսն իմաստասիրեսչիք,
Թէպէտ եւ ոչ թովանդակապէս (Բան Զ, Ե):

Մնացածը Նարեկացին, հույս ունի, իր «Մատյանի» միջոցով, վերծանողը կուտում-նասիրի - կբացահայտի, թեև ո՛չ լրիվ ու ամբողջապէս, - իրատեսորեն նկատում է նա:

«Մատյանի» մեկ այլ էջում Նարեկացին իր թերասացության, ոչ լրիվ բացորոշությանը արտահայտվելու մարդկային հիմունքները բացատրում է նրանով, որ ինքն իր ընթերցող «ընկերին կարիս» «շերմն սիրով» չմտեցնալ, առաջին իսկ վտանգի պահին ստուց տազնապած (խոսքը «Մատյանում» ինչ-որ մի պահի իր միտք-զգացմունքները «ստուցնելու» մասին է): Իր այդ պահվածքը միանգամայն «իրավացի» համարելով, ամեն ինչի, այդ թվում նաև իր «Մատյանի», լինելիությանն ու նորոգմանը, մեր հավատացողը կարևոր է համարում, միաժամանակ, դիմել իր «Մատյանը» վերծանողին, որպեսզի տեսնի նա իր ասածների իմաստն ու խորհուրդը, դրանց ամբողջական պատկերը, քողը վերցնել նրանց երեսի (Բան ԺԹ, Գ):

Իր միտք-զգացմունքները բյուր-բյուր ձևերով արտահայտող¹⁰ մեր նրբագետը տարբեր հնարանքներ է օգտագործում ընթերցողի ուշադրությունը իր կողմից չասածների, թերի ասածների կամ այլաբանորեն ասածների բուն իմաստի վրա կենտրոնացնելու և, հնարավորության դեպքում, դրանք նրա օգնությամբ վերականգնելու համար: Այսպես, Բաներից մեկը սկսվում է «Խարձեալ այլաբանեցից՝ ի նոյն շարունակ բարդեալ...» արտահայտությամբ (Բան ԻԲ, Ա), որն առնվազը նշանակում է, որ նախորդ Բանն էլ է այլաբանական եղանակով մատուցվել, և, հետևաբար, ընթերցողը հեղինակին իսկությամբ ըմբռնել-հասկանալու հաճար պետք է այդ հանգամանքը նկատի ունենա: Կամ «Մատյանում» երբեմն հանդիպում ենք նույն նպատակադրումով բերված այնպիսի արտահայտությունների, ինչպիսիք են «...Իբր զվիժած անգրելի կոչման» (Բան Ի, Զ), «...գոր չէ աստ գրելի» (Բան Ի, Ե), «...եւ գոր չէ ճառելի եւ կամ գրելի եւ կամ պատմելի եւ կամ յերեսս դիմաց բերելի» (Բան ԽԵ, Բ): Այն, որ «Մատյանը» տարբեր շերտեր ունի և դրանց համապատասխան ընթերցողներ ու լսողներ, Նարեկացին ակնարկում է իր աղոթքներից մեկում, երբ Աշում է, որ իր խոսքն այդ աղոթքում «ի կոյտս բազմութեան և «ժողովրդոց» համար է և ոչ մյուսների (Բան ԼԴ, Ա). այս վերջիններիս էլ նա, կարծես, ասելու լինի, թե քեզ էլ իմ լուրջությունն են ուղղում, դու էլ այն փորձիր հասկանալ: «Մատյանում» Նարեկացու արած այս և նմանատիպ այլ բացատրությունները ևս վկայում են այն մասին, որ նա ընթերցողի հետ իր «ձայնի» հաղորդակցվելու հետ մեկտեղ, դրան զուգակշիռ ու կենսակից, ընտրում է նաև լուրջաբան լեզուն, լուրջություն, որը այլ բան չէ, քան մեծածայն հնչում երկարագոչ:

¹⁰ Ինքը՝ Նարեկացին, իր ողբերը ոճի առումով բնութագրում է որպես «ի բազմաց կերպից շաբակարգելոց» (Բան ԶԶ, Ա):

Այսպիսով, ակնհայտ է Նարեկացու «Մատյանում» ինչ-որ յուրահատուկ զգացողության միայն ընկալելի լուծոյան՝ արտալեզվային այդ իրողության և դրան աղընթեր՝ կես-խոսք-կեսակնարկի, ծածկագրության, այլաբանության, փոխաբերության գոյության փաստը: Այդ կապակցութեամբ կրկին անդրադառնանք այն հարցին, թե ինչու հայ մեծ լեզվագետին, լեզվաբանին ու լեզվարարին հայոց հարուստ լեզուն «չբավեց», և նա զվարթ արթնութեամբ, ըստ այդմ՝ ըստ ամենայնի ասել-խոսելուն, իր խոսք-ասելիքով ընթերցողի հոգին կիզող բառային հեղեղատին դիմելուն զուգակշիռ,- ընտրեց նաև «ի խորթմբրութիւն լռելու», ըստ այդմ՝ իր ընթերցողի հետ լռելայն, անխոս ու անմարմին, իր խոսքով ասած՝ շնչով հաղորդակցվելու ուղին: Այլ կերպ ասած, կրկին հարցնենք մեզ, ո՞րն է մեր տարականոն հանճարի լուծոյան խորհուրդը:

Նախ, դժվար չէ այդ լուծոյան մեջ չտեսնել, ինչպես վերևում համոզվեցինք, ժամանակի թելադրանքը: Այսինքն, ինչ-որ իմաստով, Նարեկացու լուծոյունը պայմանական լուծոյուն է: Բայց դա նրա լուծոյան արտաքին կողմն է միայն: Ընդհանրապես հանճարները, որպես կանոն, իրենց ապրած ժամանակաշրջանի՝ կյանքի բնականոն ընթացքին խանգարող ամեն մի արգելք հաղթահարում են: «Խորհուրդ (առավել ևս վատ խորհուրդ,- Ս. Մ.) չի ընդունում ապագայի երգը», - ասում է Չարենցն իր՝ ապագա երգասաններից ուղղված յոթերորդ խորհրդում: Նարեկացին հանճարեղ է, նրա «Մատյանը» ապագայի երգ էր, և պարզ է, որ նրան խն ժամանակները իրենց չարախորհուրդ խորհուրդներով չէին կարող լռեցնել. եթե նույնիսկ նա իր արարումների ինչ-որ դրվագում, ժամանակի թելադրանքով պայմանավորված, լուռ-պապանձվում է, ընդ որում, այդ մասին իր ընթերցողին ասելով, ապա մեկ այլում, զարմանալի «անթարթափ բացութիւն աչաց» դրսևորելով, այդ լուծոյունը խոսքային մարմնեղեն տեսքի բերելով, մատուցում է իրեն հասկացող ընթերցողին: Այնպես որ, մեր հանճարի պայմանական լուծոյունը ի վերջո հակադարձվում, զվարթ արթնութեամբ խոսք-ասելիքի է վերածվում:

Նարեկացու բուն լուծոյունը այլ է. այն բոլորովին էլ պայմանական բնույթ չի կրում, այլ անպայման ոգեղեն հղացման արտահայտութիւն է: Նախ, ինչպես հայտնի է, «Մատյանը» սկզբից մինչև վերջ ի խորոց սրտի խոսք է: Իսկ «ի խորոց սրտի»-ն ոչ միշտ է խոսքով արտահայտելի և ոչ միշտ է, որ այն պետք է խոսքով արտահայտելի լինի: Նարեկացու «ի խորոց սրտի»-ն նախ և առաջ հավատքի ոլորտին է վերաբերում (մեծ հավատավորը համոզված է, որ իր «Մատյանով» հավատքի շենք է կառուցում): Իսկ հավատքի ոլորտին վերաբերող ամենայն ինչը, ինչպես ինքը՝ Նարեկացին է նշում, շունչ է, զգացողութիւն է, ապրում է, հոգու խորհրդարանի իրողութիւն է, որը իր բնույթի բերումով երբեմն դառնում է անասելի, անպատկերելի և պետք է այդպիսին մնա: Նարեկացու լուծոյունը չի նշանակում թերատ ասել, կիսատ միտք-զգացմունք ընթերցողին հայտնել: Առավել ևս, ինչ խոսք, դա չի նշանակում նաև ոչինչ չասել: Նա լռելով ավելորդ բան չի ասում, որն ասում է նրա՝ իր հոգու խորհրդարանում նշածի ու դրան ունկ դնողի հանդեպ բավականաչափ մրբազգաց լինելու մասին: Կամ էլ՝ այդ «ավելորդ» բանը իր ոգու մի հայացքով դիտել-զննելով, նրա կենսահայուրը քամելով՝ մնացյալը մի կողմ է թողնում՝ այդպես ընթերցողին ներկայացնելով իր հոգու խորհրդարանի թանճրացում պատկերները: Ոգու մեր զարմանալի մշակը իր զգացածը, մտածածը, ապրածը «լրիվ» խոսքով երկար-բարակ չի պատմում, մկարագրում, այլ դրվագում, խորհրդապատկերում է, իր հոգու խորհրդարանում եղածը հղկում-մշակում, այն իր «անմյութ» ոգու քորայտում թծում, շնչավորում, նոր այն ընթերցողի ճաշակելիքին է հասցնում: Նրան բնորոշը՝ ողջը համընդգրկող ոգու արծվային թռիչքն է և ո՛չ բառ առ բառ ընթացքը, նրա ոգու հիմնական ու գլխավոր հանգրվանները բարձունքներն են և ոչ հարթավայրերը, թեքութիւնները, փոստրակները կամ գետնախորշերը: Եթե նույնիսկ նա այս վերջիններում հայտնվում էլ է, ապա արագ դրանցից դուրս է գալիս, իր ոգու բուն հանգրվանները վերադառնալով ու դրանց դիտակետերից դրանք լռելայն դիտելով: Կրկին ընդօժենք, որ մեր բարի հանճարը բավականաչափ հարգում է իր ընթերցողին, նա նրան «իր կյանքը» չի պատմում, ամեն ինչ չի ծամում - դնում նրա հոգու մեջ. նա գիտի, որ իր այդ ընթերցողը ճանաչ է աշխարհին, նրա մարդկանց, վերջիններիս մշակույթներին ու պատմութիւններին, և, հետևաբար, նա ընթերցողի համար անհարկի ամեն ինչ չի մանրամասնում, անուն առ անուն, դեպք առ

դեպք մկարագրում: Կյանքի անընդհատ լինելիության խորհուրդին մեր դավանողը հաճախ լռելյայն է հաղորդակցվում իրեն ունկն դնողի հետ, որ այն անասելի տառապանքն ու բերկրանքը, որ ինքը զգացել է իր ոգու թոփչքի ընթացքում, նա ինքն էլ զգա, զգա իր համարվանդակ հոգու և մարմնի վրա, զգա, թեկուզև, որպես իր ճանաչողության, իր հավատքային հայտնության տառապանք ու բերկրանք (ի վերջո կյանքը, այդ թվում նաև հոգու կյանքը, - ինչպես հայ ոգու մյուս մեծատունը՝ Հովհ. Թումանյանն է ասել, - ամենքի մեջ մորից է պկսվում, մո՛րից, բայց ո՛չ կրկին): Հետևաբար, կրկին ընդգծենք. Նարեկացու լռութունը չպետք է հասկանալ չասելու իմաստով, այլ ճիշտ հակառակը՝ ավելորդ բան չասելու և շատ բան ասելու իմաստով: Պ. Սևակը լռության «լեզուներ»-ից մեկի՝ «կեսխոսք-կեսակնարկի» վերաբերյալ հետևյալ բացատրությունն է տալիս. «Ակնարկելը դու մի հակացիր բառացի կամ խոսակցական իմաստով, և ոչ էլ այն կերպ, թե ինչ-ինչ պատճառներով մենք պիտի ակնարկով խոսենք և ոչ թե լիաբերան-բացահայտ-մինչև վերջ: Բնավ ոչ: Ակնարկով խոսել և կիսախոսք գրուցել նշանակում է շարել սրբառած քարերով պատկերը-պատկերի, զգացմունք-զգացման, միտքը-մտքի, հոգեկան գոյտը-գոյտի կՈՂՔԻՆ, ԿԻՊ-ԿԻԾ»¹¹: Ասվածը իսկը Նարեկացու «ակնարկ»-ին է վերաբերում: Անտարակույս, նարեկացիական դեպքին է պատշաճում նաև Եղիշե Չարենցի հետևյալ խորախորհուրդ ոտբային.

Ամեն պոետ՝ գալիս՝ իր հետ՝ մի անտես մետ է բերում,
Եվ մետն առած, խոհակայած-որս է անում երգերում.
Բայց դառնում է պոետ նա մեծ ոչ թե մետի մեծությամբ,
Այլ նշանի՝ ահագնությամբ, որ հանճարներ է սերում:

(Ընդգծումը իմն է - Ա. Մ.)

Մինչ Նարեկացին հայ գրավոր դպրությունը իր իշխող բովանդակությամբ, իր գլխավոր խանձարորի՝ հելլենական մշակույթի ազդեցության տակ, հակված էր լիաբերան-բացահայտ - մինչև վերջ - ամեն ինչ սկզբունքին, նա աշխատում էր «մետի» մեծությանը զոտ տալ. Նարեկացին, իր «հրածին» բնույթով պայթանավորված (այս մասին «Մատնանում» քանիցս ասվում է), «շունչ» բերեց հայ գրավոր դպրություն, նա պեղեց-հանեց հայ հոգետիպի, հատկապես լռությանմբ ասելի, ոգեղեն աղբյուրները, նա հայ խոսքը, իր բառերով ասած, «սրտի լռության» քուրայով անցկացրեց, նրանում ձուլեց, նրանով թրծեց: Հայ ոգու նախագո աղբյուրներից սմվող, դրանցով իր սիրտը շրջանող հայ հանճարը հայ գրավոր դպրության մեջ աննախադեպ քայլ կատարեց. նա «վերադարձավ» իր ոգու կունքները և պահանջվածի չափ իր հոգու բաժակը դատարկեց ավելորդ բաներից, այդպես ազատություն տալով իր հոգուն, այդպես ազատ շունչ հաղորդելով իր ստեղծագործություններին՝ նույնը պահանջելով նաև իր ընթերցողներից:

Ավելորդ չէր լինի ասել նաև, որ Նարեկացին իր խորհրդավոր լռությամբ հայ ոգու արևելյան կողմը, փաստորեն, նաև պեղեց հանեց, կողմ, որը դարեր ի վեր լռեցվել, անմշակ էր թողնվել: Այնպես որ, հանճին Նարեկացու մենք տեսնում ենք հայ ոգուն ներհատուկ «երկու» «արևմտյան» ու «արևելյան» կողմերի (կամ իր՝ Նարեկացու օգնությամբ ասած, աչքերի «անթարթափ բացութիան» և «ի խոր թմբրութիւն լռելու») կենսակից գոյության առհավատչյան: Նարեկացին զգաց-արտահայտեց, որ հայ ոգին՝ զվարթ արթնության, ուշիուշուկ դիտել-զննելու, դիտած-զննածի վերաբերյալ «մեծաբարբառ» ասել-խոսելու մղմանը աղընթեր, նաև «ննջում», ի խոր թմբրություն լռում է, զվարթ արթնությանը ի հետևանք՝ «հանգստանում» է, որով զվարթ արթնության արդյունքները մարտում, ոգեկան «կենսահյութերի», ոգեկան կենսուժերի է վերածում. և դա՛ նաև հակառակ ընթացքով. և դա՛ այսպես անընդհատ:

Ավելին, նա իր ընթերցողին կարծես ասելու լինի նաև, որ իր «ձայնի» ասածներն էլ շունչ-լռության վերածի, համեմայն դեպս՝ այնքան ժամանակ, քանի դեռ նա իր լսածները չի տարրալուծել իր մեջ, դարձրել իրենը: Հայ ոգու բժշկապետը գիտի, որ իր «Մատնանով» հիվանդ ընթերցողին «դեղ» է տալիս. իսկ դեղը այն դեպքում է օրգանիզմի վրա բարերար ազդեցություն թողնում, երբ այն նրանում տարրալուծվում-անկանում է, օրգանիզմի

¹¹ Պարոյր Սևակ, նշխ., հ. I, էջ 577:

Քիվանդ բջիջները սպանելով՝ ինքն էլ է իրեն ոչնչացնում: Նա էլ, 20-րդ դարի հնդիկ երևելի մտածողներից մեկի՝ Օշոյի պես, կարծես իր ընթերցողներին ասելու լինի՝ «Եթե դուք անընդհատ ունկնդրեք իմ բառ-կեղևին, ապա վաղ թե ուշ կձանձրանանք. բայց եթե դրա միջոցով առույզանաք, ապա կհայտնվեք խորը էքստազի մեջ՝ մոռանալով այդ բառ-կեղևը: Ես չեմ խոսում խոսելու համար: Ինձ պետք չէ բառերով ձեզ որևէ պատվիրան փոխանցել: Ոչինչ ասել չեմ ցանկանում: Ես չեմ ցանկանում որևէ բան ցուցադրել: Դրանք բառեր չեն, այդ բառերը իմ լոռությունն են կրում-տանում, այդ բառերն ընդամենը կեղև են միայն: Մի՛ անհանգստացեք այդ կեղևից, նայե՛ք դրա էությանը: Այդ բառերը ապրող գոյեր են, դրանցում իմ սրտի զարկերն են արտահայտված: Ես դրանք տալիս եմ ձեզ որպես պարզև... Ես իմաստասեր չեմ, տեսարան չեմ, աստվածաբան չեմ: Իմ մեջ՝ ներսում, ինչ-որ բան կա, որը կցանկանայի ձեզ հետ կիսել: Եվ այն պատճառով, որ դուք չեք կարող ըմբռնել իմ լոռությունը՝ ես ստիպված եմ բառեր օգտագործել: Երբ դուք պատրաստ կլինեք ըմբռնելու իմ լոռությունը, այնժամ դեմ կշարտեն բառերը և կնայեն ձեր մեջ: Բայց այժմ դուք դեռ ձեր տանը չեք: Երբ նայում եմ ձեր մեջ, այնտեղ ոչ ոք չկա: Այդ իսկ պատճառով հարկ եմ համարում ուժեղ թակել: Իմ բառերը ոչ այլ ինչ են, եթե ոչ ձեր դեմքը թակոցներ: Որպեսզի դուք կարողանաք մտնել ձեր տուն: Ընդունեք իմ պարզև»¹²:

Ինչ խոսք, սույն հոդվածով ընդամենը փորձեցինք ցույց տալ հայ հանճարի խորհրդալից լոռության փաստը, որի արձանագրումը հույժ կարևոր է նրան հասկանալու համար: Իսկ այդ լոռությունը հասկանալը, այն թարգմանելն արդեն այլ խնդիր է: Կրկին հիշենք Նարեկացու հորդոր-պահանջը. լսել՝ իր սրտի լոռությունը: Դա է, որ Նարեկացու լոռության հետ գործ ունեցողին հատկապես պետք է հետաքրքրի:

С. Л. МАНУКЯН - *Сокровенное молчание Нарекаци.* - Многие нарекациеведы отметили тот факт, что в «Книге скорби» и в других произведениях поэта наличествует разными средствами выраженный (символ, мистика, аллегория, метафора, притча, легенда и пр.) *язык красноречивого умолчания*. В статье делается попытка со всею наглядностью выявить этот факт и тем самым привлечь к нему пристальное внимание исследователей, ибо вне учета этой особенности произведений Нарекаци понять его просто *невозможно*.

¹² **ОШО, Медитация: искусство экстаза - истинный мудрец, М., 1993, с. 312.**